Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արևադաշտ
համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 16 -ի
N 1-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶ

ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**Մշակվել է՝** համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակիցների կողմից
**Ներկայացվել է՝** համայնքի ղեկավար Հովսեփ Օհանյանի կողմից
**Հաստատվել է՝** համայնքի ավագանու 2017 թ հունվարի 16 –ի թիվ 1 նիստ 2 - Ն որոշմամբ

Գ.ԱՐԵՎԱԴԱՇՏ 2017թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....................................................................

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ..........................................................

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ...............

4. ՀՋՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ..............................................................................................

5. ՀՋՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....................................................................................................

6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....................................................................................................

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Արմավիրի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Արևադաշտ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին »ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Արևադաշտ համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված են Արևադաշտ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, Արևադաշտ համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶՀԾ-ն ներառում է նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Արևադաշտ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Արևադաշտ բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Արևադաշտ համայնքի աշխատակազմը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

*Համայնքի ղեկավար՝ Հ.Օհանյան*

## 2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### *2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

.Պատմական համառոտ տեղեկատվություն համայնքի մասին

. Աշխարհագրական դիրքի նկարագիր

- Արևադաշտ համայնքը ստեղծվել է 1982 թվականին Արմավիրի մարզի հարավ-արևմտյան ոչ լիարժեք մշակության պիտանի տարածության վրա, որը նախկինում եղել է զինվորական կրակադաշտ:
- Արևադաշտ համայնքի վարչական տարածքը *3086.09 հա*
- բնակավայրերի կառուցապատված տարածք 61.04 հա
- հեռավորությունը մայրաքաղաքից 60 կմ, մարզ կենտրոնից 18 կմ , տարածաշրջանային կենտրոնից 15 կմ
- Համայնքը հատում է մարզային Բաղրամյան –Սարդարապատի հուշահամալիր տանող ճանապարհը
- Ար ևադաշտ գյուղական համայնքը ունի նախալեռնային չոր մերձարևադարձային կլիմա
- գյուղական համայնքը գտնվում է նախալեռնային գոտու ծովի մակարդակից 1200 մետր բարձրության վրա:

### *2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

**Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Մարդ |
|---|---|---|
| 1. | Բնակչության առկա թվաքանակը | 409 |
| 2. | Տնային տնտեսությունների թվաքանակը | 78 |
| 2.1 | այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող | 62 |
| 2.2 | կիսակառույց տներում բնակվող | 11 |
| 3. | Ընտանեկան նպաստ ստացող բնտանիքների քանակը | 13 |

Համայնքի բնակչության 52% կազմում են տղամարդիկ և 48% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. Դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Ընդամենը | Կանայք | Տղամարդիկ |
|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի բնակչության թիվը, այդ թվում | 409 | 195 | 214 |
| | մինչև 1 տարեկան | 6 | 1 | 5 |
| | 1-2 տարեկան | 7 | - | 7 |
| | 3-4 տարեկան | 18 | 13 | 5 |
| | 5-6 տարեկան | 20 | 11 | 9 |
| | 7-10 տարեկան | 36 | 15 | 21 |
| | 11-14 տարեկան | 20 | 9 | 11 |
| | 15-17 տարեկան | 7 | 3 | 4 |
| | 18 և ավելի տարեկան | 295 | 143 | 151 |
| 2. | Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում | 12 | 9 | 3 |
| 3. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | 2 | 1 | 1 |
| 4. | Արցախյան պատերազմի մասնակիցներ | 3 | - | 33 |
| 5. | Հաշմանդամներ | 7 | 2 | 5 |
| 6. | Զբաղվածներ /հողագործությամբ/ | 255 | 156 | 99 |
| 7. | Գործազուրկներ | 25 | 15 | 10 |
| 8. | Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը | 13 | 11 | 2 |

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

## 2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ

- Արևադաշտ համայնքի վարչական տարածքը – 3086 ,09հա այդ թվում՝
  - բնակարանային ֆոնդ-61. 04հա
  - արտադրական նշանակության հողեր-4. 43հա
  - գյուղատնտեսական նշանակության հողեր -2873 .2հա
  - ջրային ֆոնդեր – 32. 77հա
  - այլ- 220 .0հա
- Բնակավայրերի տարածքը
  -բնակելի կառուցապատման-43. 94
  - այդ թվում՝ տնամերձ հողեր-43. 94
  - հասարակական-3. 98
  - ընդհանուր օգտագործման-9. 28
- Հողի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը- 140
- Սեփականաշնորհված հողի մեկ հողաբաժնի չափը-1.0հա
- Մեկ տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական հողամասերի քանակը-70
- Համայնքի սեփականություն համարվող հողերը
  -օտարված-2301.0հա
  - վարձակալության տրամադրված հողերը – *55 հա*
  - այլ հողեր -3. 84

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

- Արևադաշտ համայնքի 2017 թվականի ընդհանուր բյուջեն կազմել է 15554 .1 հազար դրամ:
- Որի մեջ համայնքի սեփական եկամուտը կազմում է 72 .2 %

*Արևադաշտ գյուղական համայնքում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ : Համայնքում գյուղատնտեսության բնագավառում տարեց –տարի ավելանում է աշխատուժը: Հիմնականում մշակում են ցորեն, առվույտ, բանջար-բոստանային կուլտուրաներ: Բնակլիմայական պայմաններից ելնելով համայնքում բնակիչները բարձր բերք են ստանում հատկապես վարունգի, պոմիդորի, պղպեղի,ձմերուկի և սեխի մշակությունից: Քանի որ, Արևադաշտ համայնքում արոտավայրերը մեծ տոկոս է կազմում,ուստի համայնքի բնակիչների երկրորդ եկամուտի աղբյուր է հանդիսանում անասնապահությունը: Բնակիչների 80 տոկոսը գրեթե ունի խոշոր եղջերավոր անասուններ:*

- Գյուղատնտեսության ճյուղերը
  - դաշտավարություն
  - անասնապահություն
  - այգեգործություն

- Գյուղատնտեսական արտանդրանքի վաճառքը իրականացվում է տեղում և մթերող կազմակերպություններում:
- Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները-232.7հա
- Խոշոր և մանր եղջերավոր անասունների քանակը
  -ընդամենը – 387
  -որից կովեր-162
- Գյուղատնտեսական ի՞նչ մթերքներ են արտադրվում
  -բոստան-բանջարեղենային կուլտուրաներ

## 2.3ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

*Արևաշատ համայնքի ղեկավարը վերընտրվել է եկրորդ անգամ 2014 թ.դեկտեմբերի 14-ին*
*. Համայնքի ավագանին ընտրվել է 2016 թվականի սեպտեմբերի 18-ին և կազմված է 5 անդամներից :*
*. Համայնքի աշխատակազմի կառուցվածքը և հաստիքների թիվը՝*

| ՀՀ | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԹԻՎԸ |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 1 |
| 2 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 1 |
| 3 | Առաջատար մասնագետ /հաշվապահ/ | 1 | 1 |
| 4. | 1-ին կարգի մասնագետ | 1 | 1 |
| 5. | Հարկ հավաքող/պայմանագրային/ | 1 | 1 |
| 6. | Հավաքարար/պայմանագրային/ | 1 | 1 |

Համայնքի ենթակայության կազմակերպությունները և դրանց

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Գրադարանի վարիչ | 1 | 1 |

## *2.4 Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը*

- Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:
- Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակի բնութագրումը

| *Հիմնական միջոցներ.* | *քանակ* | գույքի ֆիզիկական վիճակը |
|---|---|---|
| *-վարչական շենք* | *1* | |
| *-ավտոմեքենա ՎԱԶ 21-21* | *1* | *վատ* |
| *-տրակտոր МТЗ 80* | *1* | *լավ* |
| *-էքսկավատոր ЮМЗ* | *1* | *լավ* |
| *-զիլ 130* | *1* | *լավ* |
| -խոտ հնձիչ | 1 | լավ |
| - ռաֆ Е 320 | 1 | վատ անսարքին |
| -համակարգիչ | 4 | գերազանց |
| - պատճենահանող սարք | 1 | գերազանց |
| -պրինտ | 1 | գերազանց |

*2.5 Համայնքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունները*

-արտադրական ձեռնարկությունների թիվը- 1
-անվանումները, հասցեները, Էուէռնեկյանի գինու գործարան, գ. Արևադաշտ, Հայաստանի հողեր
-գործունեության բնագավառները - խաղողագործություն
- արտադրատեսակները- գինեգործություն
- աշխատակիցների թիվը 500 և ավելի

2.6 Համայնքի գերեզմանատների վիճակը –համայնքի վարչական տարածքում կա 2/հայ և եզդի ազգի / գերեզմանատներ, որոնց վիճակը գնահատվում է բավարար:

*2.7 Առևտուր և ծառայություններ*

*Արևադաշտ գյուղական համայնքում չկան առևտրի կետեր և համայնքը ստացված գյուղ մթերքը սպառում է Նորապատ համայնքում գործող <<սադախլու >>կոչվող շուկայում:*

2.8 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

- Համայնքի բնակելի շենքերի և բնակարանների թիվը
  - *համայնքում կա 70 բնակելի տուն :*

- Բնակֆոնդի ընդհանուր և բնակելի մակերեսները, 5382 քմ-ը
- Առանձնատների թիվը-9

- Վթարային առանձնատների թիվը-8
- Կիսակառույց առանձնատների թիվը-11
- Բնակարանի կարիքավորների թիվը-15

- Ավտոտնակների թիվը և մակերեսը, 5-ը՝ 170 մք

Արևադաշտ համայնքում առկա են բնակելի տների կարիք ունեցող ընտանիքներ, որոնք գտնվում են սոցիալապես անապահով վիճակում:

## 2.9 <u>Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն ջրամատակարարում</u>

Խմելու ջրի ջրամատակարարման վիճակը գնահատվում է բավարար:Համայնքը օգտվում է <<ՀԱՅՋՐՄՈՒՂ ԿՈՅՈՒՂԻ>>ՓԲԸ<<ՀՅՈՒՍԻՍ ԱՐևՄՏՅԱՆ>>մասնաճյուղի էջմիածնի տեղամասից

Հիմնախնդիրներ՝
Տեղադրված չեն խմելաջրի հաշվիչները և հորերը .

## <u>2.10 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</u>

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 5 կմ է , դրանց վիճակը գնահատվում է շատ վատ:
*Համայնքում չի գործում երթուղային տրանսպորտ:*
*Մոտակա համայնքի երթուղային տրանսպորտը Արևադաշտ համայնքից գտնվում է 3 կմ հեռավորության վրա:*
.Համայնքից մինչև մոտակա շուկա ճանապարհի երկարությունը15կմ է և վիճակը գնահատվում է ,բավարար

Հիմնախնդիրներ՝

ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ

## 2.11 <u>ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ</u>

*Արևադաշտ գյուղական համայնքը ունի միջնակարգ դպրոց որտեղ հաճախում են 48աշակերտ:*
*Համայնքի միջնակարգ դպրոցու աշխատում են 18 մանկավարժներ:*
*Դպրոցի շենքը գտնվում է շատ վատ վիճակում: 2014 թվականին համայնքի դպրոցը հովանավորվեց ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ հիմնադրամի կողմից և 2017թվականի մինչև սեպտեմբեր ամիսը Արևադաշտ համայնքը կունենա նոր դպրոցի շենք:*
*Համայնքում գործում է<<ԷՕԷՌՆԵԿՅԱՆ>> մանկապարտեզը իր տիպային շենքով,որը հովանավորում է Մայր աթոռ Սուրբ էջմիածնի եկեղեցին:Մանկապարտեզ են հաճախում համայնքի և հարակից համայնքների երեխաները անվճար հիմունքներով:*
Համայնքի ենթակայության տակ գործում է գրադարանը : Ապահովված է մասնագետով, պահպանվում է աշխատանքային բնականոն ռիթմը

Հիմնախնդիրներ՝
շենքը գտնվում է շատ վատ վիճակում
չունի ջեռուցում, էլեկտրաէներգիա
ժամանակակից ընթերցողական գրականության կարիք.
տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակ.

## 2.12 Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- Համայնքում գործում է բուժկետ, բուժաշխատողների թիվը 1 ,բուժկետը տեղակայված է դպրոցի շենքի մի հատվածում ,շենքի վիճակը շատ վատ է, ունի նորոգման և գույքային կարք:

## 2.13 Էներգամատակարարում

Արևադաշտ համայնքի էներգահամակարգը կառավարվում է Հայաստանի էլցանցներ ընկերության կողմից:
Արևադաշտ համայնքի գազամատակարարումը իրականացվում է Գազպրոմ – Արմենիա ընկերության կողմից:

## 2.14 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- գործազրկություն,սոցիալապես անապահով աղքատ բնակչություն, ցածր աշխատավարձի առկայություն
- ոռոգման համակարգի անմխիթար վիճակ

Գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիրը դժվարություններ է առաջացրել համայնքի բյուջե մուտքագրվող հողի հարկի և գույքահարկի գանձման գործընթացում:

Նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

## 2.15Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին միջավայրի կողմից ընձեռնված հնարավորությունների և սպառնալիքների գնահատում

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| 1. Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն<br>2. Համայնքի գազաֆիկացվածության բարձր | 1.Անբարեկարգ փողոցների առկայություն<br>2.Համայնքային ենթակայության |

| | |
|---|---|
| ատիճան<br><br>3. Անասնապահություն<br>4.Հողագործություն<br><br>5. Նախադպրոցական, ուսումնական հաստատությունների առկայություն<br><br>6. Պտղատու և խաղողի այգիների մոտ 70 հա տարածք | կառույցների վերանորոգման և գույքի ձեռքբերման անհրաժեշտություն<br>3.Ներհամայնքային ճանապարհների, փողոցների վատ վիճակը<br><br>4.Սոցիալապես անապահով բնակչության տոկոսը<br>5.Տնամերձ հողամասերի ոռոգման համակարգերի բացակայությունը<br><br>6.Առկա գործազրկություն<br>7.Բնակչության վարկունակության անկում<br>8. Ժամանցի սահմանափակ հնարավորություն հատկապես երեկոյան ժամերին<br>9. Ներդրումային ծրագրերի և արտասահմանյան ներդրողների բացակայություն<br>10.Գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիր<br><br>11.Ժամանակակից առևտրի և սպասարկման օբյեկտների բացակայություն |
| **Հնարավորություններ** | **Սպառնալիքներ** |
| - Հեռանկարային ծրագրեր, որոնք կբերեն ֆինանսական կայունության<br>- Մեծ է աշխատուժի առկայությունը<br>- Համայնքի ղեկավարն ու ավագանին վայելում են բնակչության վստահությունը | -բնական աղետներ<br>- Համայնքի բնակիչների ծնելիության<br>- Համայնքում գործազրկությունը<br>- Բնակչության անվճարունակ լինելը |

# 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

## 3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Արևադաշտի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը կնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայրը:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)**

| Հ/Հ | Ցուցանիշները | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով) | 28.2% | 25.6% | 21.8% | 19.2% | 16.6% |
| 2. | Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով | 0.7% | 2.0% | 1.7 % | 1.7 % | 1.8% |
| 3. | Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով | 0.1% | 0.3% | 0.5% | 0.6% | 0.7% |

## 3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- Համայնքում հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ
- Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու շահերը.

- ապահովել համայնքի նախադպրոցական, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների շենքերի հիմնական վերանորոգման, ջեռուցման, ջրամատակարարման վերականգնման և գույքի ձեռք բերման աշխատանքներ
- համայնքում պայմաններ ստեղծել՝ զարգացնելու փոքր և միջին բիզնեսը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր սեկտորում
- միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար
- բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը՝ բարելավելով համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները
- համայնքի բնակչության մշակութային կյանքի և աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպում
- բարելավել համայնքի բյուջեի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազանները
- համայնքում իրականացնել բարեկարգման և կանաչապատման ընդգրկուն աշխատանքներ
- համայնքի ճանապարհների հիմնանորոգում:

# 4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Արևադաշտ համայնքի ՀԶՀԾ-ի ֆինանսավորումն ամփոփված է կից ֆայլում:

## <u>4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ</u>

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2017թ.՝ 68 .4%, 2018թ.՝ 71 .3%, 2019թ.՝ 75.7 %, 2020թ.՝ 77 .9%, 2021թ.՝ 83. 8%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

<u>Աղյուսակ 3. Համայնքի 2015- 2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը</u>

**հազար դրամ**

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2015 փաստացի | 2016թ. փաստացի | 2017թ. կանխ. | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ | 14123.1 | 14993.1 | 17500.0 | 17905.0 | 18360.0 | 18660.0 | 19270.0 |
| | | | | | | | | |
| 1 | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | | | | | | | |
| 1.1 | Հողի հարկ | 6000.0 | 6500.0 | 8500 .0 | 8550 .0 | 8700 .0 | 8800 .0 | 9000 .0 |
| 1.2 | Գույքահարկ շենք շինությունների և փոխադրամիջոցների համար | 410.0 | 500.0 | 650 .0 | 800 .0 | 850 .0 | 900 .0 | 1000 .0 |
| 1.3 | Տեղական տուրքեր | 70.0 | 50.0 | 50 .0 | 55 .0 | 60 .0 | 60 .0 | 70 .0 |
| 1.4 | Գույքի վարձակալությունից եկամուտներ Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 2000.0 | 2300.0 | 2500 .0 | 2500 .0 | 2600 .0 | 2600 .0 | 2700 .0 |
| 2 | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ/2.1+2.2/ | 5643.1 | 5643 .1 | 5800.0 | 6000.0 | 6150.0 | 6300.0 | 6500.0 |
| 2.1 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 5643.1 | 5643 .1 | 5800.0 | 6000 .0 | 6150 .0 | 6300 .0 | 6500 .0 |
| | | | | | | | | |

Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն

( եկամտների կանխատեսումը 2015թվականի համեմատ աճը արտահայտված տոկոսներով)

| Եկամտի և ծախսի տեսակը | 2015թ. տարեկան ճշտ պլան | 2017թ. կանխ. | 2015թ փաստ.նկատմամբ % | 2018թ. կանխ. | 2015թ փաստ.նկատմամբ % | 2019թ. կանխ. | 2015թ փաստ.նկատմամբ % | 2020թ. կանխ. | 2015թ փաստ.նկատմամբ % | 2021թ. կանխ. | 2015թ փաստ.նկատմամբ % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը եկամուտներ** | 14123.1 | 17500.0 | 23 .9% | 17905.0 | 26 .8% | 18360.0 | 30.0% | 18660.0 | 32.1 % | 19270. 0 | 36.4% |
| Հարկային եկամուտներ որից | 8480.0 | 11700 .0 | 38.0% | 11905 .0 | 40.3% | 12210 .0 | 44.0% | 12360 .0 | 45.7% | 12770 .0 | 50.6% |
| Հողի հարկ | 6000.0 | 8500 .0 | | 8550. 0 | | 8700 .0 | | 8800. 0 | | 9000.0 | |
| Գույքահարկ /շենք և ավտո/ | 410.0 | 650.0 | | 800.0 | | 850.0 | | 900.0 | | 1000.0 | |
| Տեղական տուրքեր | 70.0 | 50.0 | | 55.0 | | 60.0 | | 60.0 | | 70.0 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Այլ եկամուտներ | 2000.0 | 2500.0 | | 2500.0 | | 2600.0 | | 2600.0 | | 2700.0 | |
| | | | | | | | | | | | |
| Պաշտոնական ընթացիկ դրամաշն. | 5643.1 | 5800.0 | | 6000.0 | | 6150.0 | | 6300.0 | | 6500.0 | |
| | | | | | | | | | | | |

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական ծրագրերն են՝

- ✓ Համայնքի փողոցների և ճանապարհների հիմնանորոգում
- ✓ Համայնքի արտաքին լուսավորության ցանցի կառուցում
- ✓ Գյուղապետարանի շենքի կառուցում
- ✓ Մշակույթի տան կառուցում

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրերի անձնագրերում:

### Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 1

Համայնքի փողոցների և ճանապարհների հիմնանորոգում

(Ծրագրի անվանում)

| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի անմիջական նպատակ՝ Ունենալ նորգված բարեկարգված փողոցներ և ճանապարհներ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 4200.0 | | | | |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 100.0 | | | | |
| 2. Փողոցների և ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում և նորոգում | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 4100.0 | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում<br>1.2.Շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը<br>1.3. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ իրականացնել աշխատանքները<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Իրականացնել աշխատանքները<br>2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 100.0 հազար դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 4000.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 4100.0 հազար դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում | | | | | | |

## Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 2

Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնում
(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Քաղաքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ՝ Ունենալ գիշերային լուսատուներով լուսավորված, բարեկարգված փողոցներ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | 5660.0 | | | |
| Ծրագրի միջանկյալ | 1. | | | | | | |

<table>
<tr><td rowspan="8">արդյունքներ<br>1.Փաստաթղթերի կազմում<br><br><br>2. լուսավորության ցանցի վերականգնում</td><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>-</td><td></td><td>160.0</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td>5500.0</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Իրականացնել աշխատանքները<br>2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր 160.0 հազար դրամ<br>Կապիտալ ծախսեր 5500.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն 5660 .0 հազար դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնում</td></tr>
</table>

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 3

<u>Գյուղապետարանի շենքի կառուցում</u>

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7"><u>Գյուղապետարանի շենքի կառուցում</u></td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ<br>Գյուղապետարանի շենքի կառուցում</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>-</td><td></td><td></td><td>4200.0</td><td>6000.0</td><td></td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br>1.Փաստաթղթերի կազմում</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>-</td><td></td><td></td><td>200.0</td><td></td><td></td></tr>
</table>

| 2. Գյուղապետարանի շենքի կառուցում | 2. | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | 4000.0 | 6000.0 | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում<br>1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ, իրականացնել աշխատանքները<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Իրականացնել աշխատանքները<br>2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 200.0 հազր դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 10000.0 հազր դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 10200.0 հազր դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Բարեգործություն և պետության կողմից ֆինանսական աջակցություն | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Գյուղապետարանի շենքի կառուցում | | | | | | |

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N4

Մշակույթի տան կառուցում

(Ծրագրի անվանում)

| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Մշակույթի տան կառուցում | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի անմիջական նպատակ՝<br>Ունենալ մշակույթի տուն,համայնքում մշակույթի զարգացման համար | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | - | | | | 7300.0 | 5000.0 |

<table>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br><br>1.Փաստաթղթերի կազմում<br><br>2. Գույքի ձեռքբերում, Ջեռուցման ցանցերի կառուցում,</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>-</td><td></td><td></td><td></td><td>300.0</td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>7000.0</td><td>5000.0</td></tr>
